



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

28.03.2025թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երևան

2025 թվականի մարտի 28-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարությանը, Մարիամ Գալստյանը և Լիլիթ Ալեքսանյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հանձնաժողովի էլեկտրոնային ուսուցման հարթակի և մշակված դասընթացների ներկայացում
2. Պաշտոնատար անձի վերաբերյալ շահերի բախման, ինչպես նաև այլ ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքների ներկայացում
3. Մեդիա հրապարակման հիման վրա ուսումնասիրության արդյունքների քննարկում
4. Հանձնաժողովի ռազմավարական զարգացման 2025-2027թթ ծրագրի և հավելվածների նախագծերի քննարկումը
5. «ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 04-Ն համատեղ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համատեղ որոշման ներկայացում

Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը առաջարկեց նիստի օրակարգում ներառել 200,000 ՀՀ դրամը գերազանցող նվիրատվություն կատարելու վերաբերյալ հարցը:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյանը: Օրակարգի երկրորդ կետով ներկայացվեց Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ երկու տեղեկանք: Առաջին տեղեկանքը վերաբերում էր մեդիա հրապարակման հիման վրա շահերի բախման առերեսույթ խախտման վերաբերյալ իրականացրած ուսումնասիրությանը, որը ներկայացնելիս Հանձնաժողովը՝ հաշվի առնելով Գուրգեն Մարտիրոսյանի նկատմամբ արդեն իսկ հարուցված ՎԻՎ վարույթը և Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկան, որոշեց՝ գրություն ուղարկել համայնքի ղեկավարին, արձագանագրել խախտումը՝ առաջարկելով «Ֆավորիտ-Մ» ընկերության հետ հետազայում գործարքներ կնքելիս, նախապես դիմել Հանձնաժողովին՝ համաձայնություն ստանալու նպատակով:

Գուրգեն Մարտիրոսյանի նկատմամբ կատարված հաջորդ ուսումնասիրության արդյունքները ներկայացնելուց հետո, Հանձնաժողովը որոշեց գրություն ուղարկել Գավառի համայնքապետարան՝ համայնքային հիմնարկի կողմից անշարժ գույքի վարձակալության պայմանագրի վերաբերյալ, ինչպես նաև՝ ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացող ՀՈԱԿ-ին ուղարկել գրության պատճենը:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության փորձագետ Հեղինե Ենգոյանը: Հարցի շրջանակներում Հանձնաժողովի անդամները քննարկեցին մանրամասները, որի արդյունքում՝ հաշվի առնելով քննարկված դեպքի փաստական հանգամանքները և կիրառելի իրավանորմերը՝ որոշվեց վարքագծի կանոնի առերեսույթ խախտման հիմքով չհարուցել համապատասխան վարույթ Արարատ Միրզոյանի նկատմամբ:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց Տիգրանուհի Խալաֆյանը: Հանձնաժողովի էլեկտրոնային ուսուցման հարթակի և մշակված դասընթացների նախագծային տարբերակը ներկայացվեց, որից հետո Հանձնաժողովի անդամների կողմից հանձնարարվեց բոլոր վարչություններին՝ լրամշակել և առաջարկներ ներկայացնել վարչության գործառույթներին վերաբերելի նյութերը՝ հարթակում տեղադրելու նպատակով՝ ժամկետ սահմանելով մեկ շաբաթ: Հարթակի բոլոր ֆունկցիոնալները ներկայացնելուց հետո Հանձնաժողովը որոշեց վարչությունների կողմից կատարված լրամշակումներից հետո գործարկել հարթակը:

Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացրեց Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ալեքսանյանը: «ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 04-Ն համատեղ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համատեղ որոշումը նախապես ներկայացվել էր Հանձնաժողովի անդամներին՝ դիտարկման: Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց դիտարկումները, որոշվեց՝ կատարված դիտարկումները ներկայացնել նաև Կենտրոնական բանկ՝ իրենց կողմից հաստատման:

Օրակարգի չորրորդ հարցը ներկայացվեց Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ Աննա Մանուկյանի

կողմից: Հանձնաժողովի ռազմավարական զարգացման 2025-2027թթ ծրագրի և հավելվածների նախագծերի ներկայացման ընթացքում Հանձնաժողովի անդամները իրենց դիտարկումները կատարեցին, արդյունքում՝ որոշվեց լրամշակել հավելվածները: Ծրագրի հավելվածներից մեկը վերաբերում էր Հանձնաժողովի ռազմավարական զարգացման 2025-2027 թթ ծրագրի գործողությունների պլանին, որտեղ Մարիամ Գալստյանն առաջարկեց նախատեսված գործողությունների վերաբերյալ ներկայացնել նաև դրանց ֆինանսավորման աբյուրները՝ փոփոխությունների համար ժամկետ սահմանելով մեկ շաբաթ: Հանձնաժողովի ռազմավարական զարգացման 2025-2027թթ ծրագրի և հավելվածների բովանդակային խմբագրումների համար ժամկետ սահմանվեց մինչև սույն թվականի ապրիլի 15-ը:

Հրապարակային օրակարգում ներառված վեցերորդ հարցի՝ 200,000 ՀՀ դրամը գերազանցող նվիրատվություն կատարելու վերաբերյալ քննարկման արդյունքում Հանձնաժողովը որոշեց «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի եվ շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների եվ ծախսերի հայտարարագրերի լրացման ուղեցույցում» փոփոխություն կատարել հետևյալ ձևակերպմամբ. *«նվիրատվության արժեքը 200 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում (ներառյալ՝ հայտարարագրման հաշվետու ժամանակահատվածում նույն անձից (նույն աղբյուրից) կամ նույն իրադարձության կամ միջոցառման շրջանակներում դրանց հանրագումարային արժեքի դեպքում) ենթակա են հայտարարագրման»:*

Օրակարգում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. Հանձնաժողովի էլեկտրոնային ուսուցման հարթակի և մշակված դասընթացների վերաբերյալ հանձնարարել Հանձնաժողովի բոլոր վարչություններին՝ լրամշակել և առաջարկներ ներկայացնել վարչության գործառույթներին վերաբերելի նյութերը՝ հարթակում տեղադրելու նպատակով, ժամկետ սահմանելով մեկ շաբաթ:
2. Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ՝ գրություն ուղարկել Գավառ համայնքի ղեկավարին և արձագանքելով խախտումը՝ «Ֆավորիտ-Մ» ընկերության հետ հետազայում գործարքներ կնքելիս, նախապես դիմել Հանձնաժողովին՝ համաձայնության:
3. Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ՝ գրություն ուղարկել Գավառի համայնքապետարան
4. Արարատ Միրզոյանի նկատմամբ վարքագծի կանոնի առերևույթ խախտման հիմքով չհարուցել համապատասխան վարույթ:
5. Հանձնաժողովի ռազմավարական զարգացման 2025-2027թթ ծրագրի և հավելվածների վերաբերյալ բովանդակային խմբագրումները կատարել մինչև սույն թվականի ապրիլի 15-ը:

6. Հանձնաժողովի ռազմավարական զարգացման 2025-2027 թթ ծրագրի գործողությունների պլանում ներկայացված գործողությունների համար մշակել նաև ֆինանսավորման աղբյուրները՝ ժամկետ սահմանելով մեկ շաբաթ:
7. «ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 04-Ն համատեղ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» համատեղ որոշման վերաբերյալ Հանձնաժողովի անդամների կողմից կատարված դիտարկումներն ուղարկել նաև Կենտրոնական բանկ՝ իրենց կողմից հաստատման:
8. 200,000 ՀՀ դրամը գերազանցող նվիրատվություն կատարելու վերաբերյալ՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի եվ շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների եվ ծախսերի հայտարարագրերի լրացման ուղեցույցում» փոփոխություն կատարել:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Քաղվածք
ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի վերաբերյալ
տեղեկանքի

28.03.2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչությունը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև Հանձնաժողովի կրթական, հանրային իրազեկվածության և մոնիթորինգի վարչության կողմից 2025 թվականի մարտի 14-ին ներկայացված համապատասխան զեկուցագիրը, իրականացրել է «Ժողովուրդ» լրատվականի՝ «ՏԵՍԱՆՅՈՒԹ. Արարատ Միրզոյանը հրաժարվում է պատասխանել հայ լրագրողների հարցերին և վիրավորում է» վերտառությամբ [հրապարակման](#) ուսումնասիրությունը:

1. Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվություն՝

ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Կառավարության նիստից հետո վիրավորել է լրագրողներին:

2. Ուսումնասիրության շրջանակներում էական նշանակություն ունեցող հանգամանքներ՝

Հանրապետության նախագահի 2021 թվականի օգոստոսի 19-ի թիվ ՆՀ-242-Ա հրամանագրով Արարատ Միրզոյանը նշանակվել է ՀՀ արտաքին գործերի նախարար և պաշտոնավարում է մինչ օրս:

3. Վերաբերելի իրավական կարգավորումներ՝

1. Հանձնաժողովը քննարկել է հրապարակման առարկան Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնադրքով (սահմանված նորմերի համատեքստում:

Քննության առարկային վերաբերելի է վարքագծի հետևյալ կանոնը՝

Կանոնադրքի 51-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է **լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները**, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:

Գասպարին ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է, որ պետք է հստակ

տարանջատում մտցվի քննադատության և վիրավորանքի միջև: Եթե խոսքի միակ նպատակը վիրավորելն է, ապա համաչափ սանկցիան, որպես կանոն, չի հանգեցնի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի խախտման: Այլ կերպ ասած՝ եթե ցնցող խոսքը ունի քննադատելու նպատակ, ապա որպես կանոն, այն կպաշտպանվի Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո: Եվրոպական դատարանը նշել է, որ միայն վիրավորական կամ ագրեսիվ խոսքերի կոնտեքստի մանրամասն ուսումնասիրության միջոցով է, որ հնարավոր կլինի իմաստալից կերպով տարանջատել ցնցող և վիրավորող խոսքը, որը պաշտպանվում է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով, այնպիսի խոսքից, որը հանգեցնում է անհիմն վարկաբեկման, օրինակ՝ այն դեպքում, երբ խոսքի միակ նպատակը վիրավորելն է:¹

Վերոգրյալից ելնելով՝ քննարկվող դեպքում Ա.Միրզոյանի վարքագծի իրավաչափությունը գնահատելու համար կարևորում ենք հետևյալ հանգամանքները՝

1) վերջինիս խոսքի բնույթը, արդյոք այն վիրավորական է եղել, ունեցել է վիրավորելու նպատակ,

2) լրագրողների վարքագիծը, որոնց ուղղվել է խոսքը, այդ թվում՝ Ա.Միրզոյանի խոսքին նախորդող վարքագիծը,

3) ընդհանուր սոցիալական կոնտեքստը:

Անդրադառնալով Արարատ Միրզոյանի խոսքի բնույթին՝ արձանագրվել է, որ նրա գործածած բառերի և արտահայտությունների իմաստաբանական վերլուծությունը հանգում է հետևյալին.

- «անդաստիարակ» նշանակում է «դաստիարակ չունեցող», «առանց դաստիարակության, անկիրթ» (Էդվարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 52),

- «անշնորհք» բառը բացատրվում է «շնորհքից զուրկ, ապիկար» և գործածվում է իբրև մեղմ հանդիմանություն (Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 1, էջ 161), բառը բացատրվում է նաև «անկարգ, անվայել, անպատշաճ, տգեղ» (Էդվարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976),

- «ոչ արհեստավարժ» նշանակում է «ոչ հմուտ»,

- «սուս մնալ» արտահայտությունը նշանակում է «լռել, ձայն չհանել, տրտունջ, բողոք չհայտնել» (Էդվարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 2, էջ 1346),

- «ամոթ Ձեզ» արտահայտությունը գործածվում է իբրև նախատական բացականչություն (Էդվարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 1, էջ 34),

- «չափն անցնել» արտահայտությունը նշանակում է «չափավորության սահմանից դուրս գալ, ծայրահեղության հասնել» (Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. 4, էջ 18):

¹ Տես Գասպարին ընդդեմ Հայաստանի (Gaspari v. Armenia (No. 2)) գործով 2023 թվականի հուլիսի 11-ի վճիռը, դիմում no. 67783/13, § 27

Վերոգրյալից ելնելով՝ հարկ է նկատել, որ Ա.Միրզոյանի գործածած արտահայտություններն իրենց բնույթով վիրավորական չեն, որոշ արտահայտություններ (անդաստիարակ, անշնորհք, ամոթ Ձեզ) ունեն մեղմ հանդիմանական կամ նախատական երանգ: Ընդ որում՝ էական է գնահատվել այն հանգամանքը, որ Ա.Միրզոյանը նշված արտահայտությունները կիրառում է՝ նկարագրելով լրագրողի գործողությունները (խոսքը) և ոչ թե անձը:

Հանձնաժողովն արձանագրել է, որ Ա.Միրզոյանը նշված արտահայտությունները հնչեցրել է՝ արձագանքելով լրագրողի հարցին առ այն, թե արդյոք վերջինս միայն թուրք լրագրողներին է հարցազրույց տալիս: Հարկ է նկատել, որ նշված միջադեպը հաջորդել է սույն թվականի մարտի 10-12-ին թուրքական 10 լրատվամիջոցների մասնակցությամբ [մեդիատուրին](#), ինչին էլ վերաբերում է լրագրողի հարցը: Ըստ այդմ, քննարկվող դեպքում հարցը մասամբ հիմնվել է փաստական հանգամանքների վրա, սակայն էական կերպով նենգափոխել է դրանք. հրապարակային տվյալների համաձայն՝ Ա.Միրզոյանը հարցազրույց չի տվել և չի հանդիպել 2025 թվականի մարտի 10-12-ը Հայաստան այցելած՝ թուրքական լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

Միաժամանակ, քննարկվող դեպքը տեղի էր ունեցել այն պայմաններում, երբ ՀՀ և Ադրբեջանի Հանրապետության միջև ընթանում էին խաղաղության պայմանագրի շուրջ բանակցությունները: Ընդ որում, հենց նույն օրը՝ միջադեպից մի քանի ժամ անց, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը [հաղորդել է](#), որ խաղաղության համաձայնագրի նախագծի տեքստը համաձայնեցվել է, ինչին հաջորդել է հանրության տարբեր շրջանակների բուռն արձագանքը²:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը գնահատել է, որ լրագրողի հարցը սադրիչ բնույթի է եղել և այդպիսի նպատակ է ունեցել՝ նկատի ունենալով նաև, որ հարցը տրվում է այն բանից հետո, երբ Ա.Միրզոյանն արդեն հրաժարվել էր ճեպագրույցից և շարժվում էր լրագրողների հակառակ ուղղությամբ (այլ խոսքերով՝ հարցը չի տրվել հարցազրույցի շրջանակներում):

Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ մամուլի ազատությունը ներառում է նաև չափազանցության կամ անգամ սադրանքի որոշակի աստիճանի դիմելու հնարավորությունը³:

Այնուամենայնիվ, դեպքի ուսումնասիրությամբ Հանձնաժողովը եզրահանգել է, որ Ա.Միրզոյանի արձագանքն իր բովանդակությամբ, տոնայնությամբ և բնույթով համահունչ կամ համապատասխան էր լրագրողների վարքագծին՝ հաշվի առնելով՝

² Տես, օրինակ, Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակված «Հարցազրույց Արսեն Թորոսյանի հետ» տեսանյութը, որում հարցազրույցավարը նշում է. ««Սա պայմանագիր չի, սա կապիտուլյացիա է, և դուք նաև զիջել եք վերջին երկու կետը՝ դիմադրելուց հետո: Եվ սա ներկայացվում է հանրությանը որպես բանակցված փաստաթուղթ, ինչի՞, որովհետև բանակցության ժամանակ մեր շահը կա, նրանց շահը կա», - ասում է ողջ ընդդիմադիր դաշտը:»: Հասանելի՝ <https://www.youtube.com/watch?v=JWmKXMjNULo>

³ Տես, օրինակ, Պեդերսենը և Բաադսգաարդն ընդդեմ Դանիայի (Pedersen and Baadsgaard v. Denmark [GC]) գործի շրջանակներում 2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը (ՄՊ), դիմում no. 49017/99, § 71

- հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների և դրանց կապակցությամբ պետական քաղաքականության հետ կապված սոցիալական լարված իրավիճակը,

- այն, որ լրագրողի հարցը կատարվել է հարցազրույցից դուրս, ունեցել է սադրիչ բնույթ և Ա.Միրզոյանի կողմից ընկալվել է որպես քաղաքական բնույթի հայտարարություն (Ա.Միրզոյանը, մասնավորապես, նշել է՝ սա լրագրողների մասնագիտական գործունեություն չի, սա քաղաքական ակցիա է),

- այն, որ Ա.Միրզոյանի արտահայտությունները վիրավորական բնույթի չէին, այլ ավելի մեղմ՝ հանդիմանական երանգ ունեին և ուղղված էին լրագրողների գործողություններին գնահատական տալուն և ոչ թե նրանց անհատապես վիրավորելուն:

Հանձնաժողովն արձանագրել է, որ Կանոնագրքի 51-րդ կետով սահմանված՝ լրագրողի հետ հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորելու և լրագրողների իրավունքները չխախտելու պահանջների առերևույթ խախտում կարող են պարունակել այն դեպքերը, երբ **հանրային պաշտոն զբաղեցնող անձն իր վարքագծով վիրավորում է լրագրողներին, նրանց պատիվն ու արժանապատվությունը**: Գտնում ենք, որ **անձնական բնույթի վիրավորանք չպարունակող, մեղմ հանդիմանական ու նախատական բնույթի քննադատական խոսքը**, որը նաև իր բնույթով համարժեք է լրագրողի վարքագծին, չի կարող համարվել ոչ հարգալից վերաբերմունք:

Վերոգրյալի համատեքստում դիտարկելով վերոնշյալ հրապարակմամբ ներկայացված՝ Ա.Միրզոյանի վարքագիծը Կանոնագրքի 51-րդ կետին համապատասխանության տեսանկյունից՝ Հանձնաժողովն, այսպիսով, արձանագրել է, որ այն չի պարունակում վարքագծի կանոնի առերևույթ խախտում: